

ԵՐՈՒՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՎԱՆՔԸ ԵՒ
ՄՐՈՑ ՅԱԿՈԲԱՆՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

Ամբողջ աշխարհին յայտնի Երուսաղեմ սուրբ փառաբեր,
աստուածաշնչային Սաղեմն է՝ որ թարգմանում է՝ խաղաղութիւն: Այն
կոչւում է նաեւ սուրբ փառաբեր, որովհետեւ մեր Տէր Յիսուսի սուրբ
արիւնը այստեղ յեղուեց:
Հին Կտակարանում առաջին անգամ Երուսաղեմի մասին կարդում ենք
Ծննդոց գրքում, որտեղ բարձրեալ Աստծոյ փահանան՝ Սաղեմի արքայ
Մեղիսեղեկը, հաց ու գինով դիմաւորելով օրհնում է Աբրահամին
(Ծննդ. 14:18):

Երուսաղեմը գտնւում է ծովից 750 մետր բարձրութեան վրայ եւ
շրջապատուած է գեղեցիկ լեռներով ու բլուրներով, եւ իսկապէս դրանք
գեղեցիկ են, որովհետեւ բոլորը ականատես են եղել մեր Փրկիչ Տիրոջ,
Յիսուս Քրիստոսի երկրային կեանքին, իսկ շատերի վրայ Տէրը աղօթել է
մեր փրկութեան համար, բոլորիս Արարիչ ու Հայր Աստծուն:
Իսկ Երուսաղեմի Հայոց մայրավանքը գտնւում է էլ անլի բարձր մի
տարածքում՝ որը շատերիս յայտնի՝ Սիոն լեռն է: Բարի հպարտութեամբ
նշեմք, որ Աստուածաշնչում նրա մասին գրուած է. «Սիոնից կը գայ
Փրկիչը» (Հովմ. 11:26) եւ դարձեալ. «Ահա տեսայ Գառը կանգնած էր
Սիոն լեռան վրայ» (Յայտ. 14:10): Սիոնին անմիջապէս կից շատերիս
յայտնի Մորիա լեռն է, որտեղ ըստ Աստծոյ խօսքի հայր Աբրահամը
պետք է գտնէր իր Իսահակ որդուն, որտեղ եւ յետոյ Հրեաները կառուցե-
ցին իրենց սուրբ տաճարը: Այն երկու անգամ աներուելուց ու վերա-
շինուելուց յետոյ, 70 թուականին Տիրոս կայսրի կողմից իսպառ
հաւասարեցուցեց հողին: Այժմ դրա տեղում 637 թուին կառուցուած
Օմարի ոսկեզմբէ՝ մզկիթն է կանգնած: Իսկ մամեֆիս յայտնի Դողգոթան,
համարում է այդ Մորիա լեռան գագաթը, որտեղ անած Սարէկա ծառից
կախուեց Աբրահամի գոհի համար նախատեսուած խոյր, որը մարդկու-
թեան մեղքերի համար խաչուած Աստծոյ Գառի՝ Յիսուս Քրիստոսի
խորհուրդն ունէր, որ կատարուեց ճիշտ նոյն տեղում:
Այս մանրամասները գրուեց, որպէսզի իմանանք, թէ որքան կարեւոր
տեղում է գտնւում Հայոց թաղն ու նրա մայրավանքը:

Ըստ Ագաթանգեղոս հնագոյն պատմիչի, վանքը հիմնադրուել է Գրիգոր
Լուսաւորչի ձեռքով, օժանդակութեամբ Տրդատ եւ Կոստանդինոս
արքաների: Իսկ Հայոց Կիլիկիան թագաւորութեան ժամանակ այն
բարեկարգուել եւ ընդարձակուել է:
Անհանգիստ ու խառը անցած ֆան դարերի ընթացքում տասնեակ
հեթանոս եւ բարբարոս ազգեր տիրեցին Երուսաղեմին: Շատերի նախնանք
գրգռող Հայոց վանքի տարածքը, բազում փորձութիւնների ու վտանգների
ենթարկուեց, բայց շնորհիւ Աստծոյ, Հայ բարեպաշտ հոգեւորականների
աղօթքներով եւ ազգանուէր զաւակների ջանքերով, այն այսօր էլ է
կանգուն, եւ հաւատում ենք, որ մինչեւ մեր Տիրոջ երկրորդ գալուստը
նոյնպէս հաստատուն կը մնայ:

Սրբոց Յակոբեանց վանքի Հայոց անխափան սեփականութիւնը հաստա-
տում է նաեւ նրա արտաքին դրան կամարի վրայ գտնուող սուլթանական
հրամանի ֆարէ արձանագրութիւնը:

Սուրբ Յակոբայ վանքի կառոյցները չունեն այն վեհաշուքութիւնը, ինչով
որ հպարտանում են միւս յարանաւանութեանց եկեղեցիները, բայց իր
քաղաքադարեայ հնութեան տեսքով պատկառանք է ներշնչում դիտողին,
մանաւանդ երբ տեղեկանում ենք, թէ ինչպիսի վայրագ փոթորիկների է
դիմացել այն եւ հաստատուն մնացել մինչեւ այս խաղաղ օրերը հասնելը:

Վանքի տարածքը այստեղի չափանիշներով քառականգն պատկանելի է, և կազմում է Հիմն ֆադաֆի մեկ վեցերորդ մասը, որտեղ բացի մայր տաճարից կան մասնական շենքեր, մատուռներ, տներ և պատրիարքարանը, որի հիմնաւորը դահլիճների պատերից, մեզ են նայում Հայոց Նրուսադէի անխոնջ մշակների՝ պատրիարքների մեծադիր իւղաներկ կտանները, իսկ քիչ հեռու, այս աշխարհի հօրների՝ կայսրերի, թագաւորների, թագուհիների և այլ քարերարների դիմանկարները, որոնք իրենց ժամանակին զանազան կերպերով առնչութիւն են ունեցել Նրուսադէի Հայոց վանքի հետ:

Քիչ այն կողմ քարէ աստիճանները մեզ տանում են միաբանութեան մախկին սեղանատունը, որտեղ «Յայսմաւորքի» ընթերցողութեան ուղեկցութեամբ, իրենց համապատասխան հացն են նաշակել Աստուծոյ մշակները: Դրա շուրջը այժմ տարագիր հայորդիների փոքրիկ քնակարաններն են, որոնցից մի քանիսը իրենց անշուք պարզութեամբ մինչեւ հիմա վանական խցեր են յիշեցնում:

Մայրավանքի տարածքում աչքի ընկնող նարտարապետական կոթողներից է 1929թ. կառուցուած Կիւլպենկեան մատենադարանը, իր հնարքով 100,000-ից անլի գրքերով, իսկ սուրբ Թարգմանչաց վարժարանը, որը մի հրաշակերտ եռաշարկ քարէ շէնքում է գտնուում, այն դարբնոց է, որտեղ կերտուում են հայորդի մանուկների հոգիները, այլագգի տարալուծումից փրկուելու համար:

Այստեղ է գտնուում նաեւ մախկին ժառանգաւորաց վարժարանի շէնքը, որը այժմ վերածուել է Հայոց Նրուսադէի դարաւոր պատմութիւնը ցուցադրող թանգարանի: Իսկ Աստուածարանական վարժարանի ժամանակակից ռնձ կառուցուած կրթահամալիրը գտնուում է վանքի պարիսպներից դուրս՝ գլխաւոր մուտքի դիմաց:

Յթէ նորից ֆայելու ինքնի վանքի հիմնաւորը դեղնափայլ քարերով սալաշատակուած նեղիկ փողոցներով, որտեղով դարեւ շարունակ մարդկանց քաղութիւններ են ֆայել, մինչեւ իսկ թշնամի ասպատակողներ, այդ պատճառով այնտեղ կը հանդիպենք երկաթէ ծանր դռների, որոնք մի ժամանակ ամուր պատուար են հանդիսացել օտար զավթիչների դէմ:

Որպէս հետաքրքիր լրացում ասեմք, որ ինչպէս հնում, մինչեւ այսօր էլ, մայրավանքի գլխաւոր մուտքի դռները երեկոյեան ժամը 10-ից փակուում են մինչեւ առաւօտ:

Այժմ անլի մանրամասնօրէն ծանօթանալով Սուրբ Յակոբեանց մայր տաճարի նկարագրութեանը, որը թէ՛ համայն հայութեան պարծանքն է, և թէ՛ Հայոց Նրուսադէի քառամող Քրիստոսաբայր Շուրանը: Նախ ասեմք, որ այն կառուցուած է շատ հեռու, և չունենէ հիմնադրութեան ստույգ թուականը, բայց աւանդութիւնը մեզ տանում է մինչեւ Գրիգոր Լուսաւորիչ և Տրդատ թագաւորի ժամանակները: Թէկուզ ոչ արտաքին, բայց ներքին նարտարապետական կառուցուացքով և իր չորս լայնահիստ սիւներով, ապացուցուում է նրա հայկական ծագումը, որ նման է թէ՛ սուրբ Էջմիածնի մայր տաճա րին, թէ Բագրեւանդի և Գլակայի հին եկեղեցիների ռնձին:

Սուրբ Յակոբի տաճարի երկարութիւնը 22, իսկ լայնութիւնը միջին հաշուով 16 մետր է: Իսկ տաճարը իր անունը ստացել է աւետարանական Ջեքեդիսի որդի Սուրբ Յակոբոս առաքելի անունից, որովհետեւ իր նահատակութիւնից յետոյ նրա կարուած գուլթը ամփոփել են եկեղեցու հիւսիսային պատի մէջ բացուած մատուռում, որ այդպէս էլ կոչուում է. «Սուրբ Գլխադրի մատուռ», որտեղ գիշեր ու զօր անմար կանթեղներն են վառուում:

Ըստ աւանդութեան մախկինում Սուրբ Յակոբայ մայրավանքի տեղում եղել է առաջին եպիսկոպոսապետ՝ սուրբ Յակոբ Տեառնեղոսը տունը, որտեղ եւ իր մահատակութիւնից յետոյ թաղել են նրա մարմինը: Սուրբի գերեզմանը այժմ գտնուում է իր իսկ անունով կոչուած Աթոռի տակ, եւ տեղակայուած է եկեղեցու աջակողմեան սիւնի մօտ: Իսկ երբ պաշտօնապէս այդ վայրը վերածուում է եկեղեցու, նրա սուրբ մասունքները տեղափոխուում են Աւագ Խորանի տակ: Իսկ մախկին գերեզմանի տեղում, որպէս յարգանքի տուրք, այդտեղ գտնուող Սուրբ Յակոբոսի աթոռի վրայ կախուած վառուում է անմար կանթեղը: Այդ պատուաւոր Աթոռին տարին միայն մէկ անգամ իրաւունք ունի բազմելու հայոց Նրուսաղէմի գահակալոյ պատրիարքը, իբրեւ Գլխադրի յաջորդը:

Աւելացնենք, որ այդ ժամանակի գահակալոյ պատրիարքին թոյլ է տրուում առաջին անգամ մտնել այդ աթոռին միայն իր գահակալութեան ընտրութեան օրը:

Եկեղեցու կենտրոնական խորանն ու ռեկտոն խաչկաները պատրաստուել են 1724 թ. Գրիգոր Շրթալակիր պատրիարքի օրօք, իսկ պատերի գեղեցկազարդ յախճապակէ սալիկները՝ շուրջ երեք դար առաջ, որոնք սրահներին տալիս են իւրայատուկ արեւելեան գեղեցիկ ճին: Ասենք որ եկեղեցական բոլոր արարողութիւնները այստեղ կատարուում են միմիայն կանթեղներին ու մումերի յոյսի տակ: Իսկ բազմազան ու նրբանշակ կանթեղները այնքան առատ են, որ տօնական պատարագների ժամանակ տաճարի սրահների առաստաղները կարծես վերածուում են մի գունագեղ ու աստղազարդ երկնքի:

Ի տարբերութիւն միւս եկեղեցիների Սրբոց Յակոբեանց տաճարը իր մէջ ունի 23 պատարագամատոյց խորաններ, ու բոլորն էլ Գրիստոսի ընտիր սրբերի անուններով: Դրանցից ամենահնագույնը սուրբ Գլխադրի մատուռն է, որին կից՝ սուրբ Մինաս Ալեքսանդրացուն, եւ սուրբ Սարգիս Զօրավարին նուիրուած մատուռն է, քաղկացած երկու պատարագամատոյց սեղաններից, որոնց հարեւանութեամբ գտնուում է սուրբ Մակար հայրապետի մատուռ - գերեզմանը, որը իր անուն տօնակատարութեան ժամանակ վերածուում է պատարագամատոյց սեղանի, իսկ դրա վերելում գտնուող խուցը մախկինում ծառայել է որպէս խոստովանատեղի:

Աւելացնենք, որ սուրբ Մակարի մատուռը առնչութիւն ունի նաեւ Գրիգոր Լուսաւորչի հետ, որովհետեւ մախկինում այդտեղ պահուել է մեր սուրբ հայրապետի նշանաւոր մատունքը:

Եկեղեցու մայր պատի մէջ կայ մի փոքրիկ դուռ, որ մեզ տանում է դէպի վերին մատուռները, որոնցից առաջինը կոչուում է սուրբ Նշան, որտեղ մախկինում պահուում էր կենարար Խաչափայտի մասունքը, գետնեղած արուեստավար ձեռքով պատրաստուած գեղեցիկ ու թափանցիկ խաչանիշ զարդի մէջ, որ ապահովութեան համար այժմ գտնուում է գանձատանը: Այդտեղից աստիճանները մեզ տանում են դէպի տասներկու առաքելաներին նուիրուած մատուռը, որ հնում եղել է թագաւորների աղօթատեղի: Եկեղեցու հիւսիսային կողմում է գտնուում նաեւ սուրբ Ստեփանոսի մատուռը, որ այժմ ծառայում է որպէս աւանդատուն: Այդտեղ գտնուում է սուրբ Կիրոնի Նրուսաղէմացի հայրապետի աւագանը, որտեղ 351 թւին, սուրբ Խաչի հրաշափառ երեւման օրը մկրտուեցին աւելի քան 5000 հոգիներ: Իսկ երախաների մկրտութեան աւագանը գտնուում է մատուռի հիւսիսային պատի մէջ: Այդ մատուռի մէջ գտնուող սանդուխտով, ամեն օր եկեղեցու ծառաները բարձրանում են դէպի վեր՝ գեղաքանդակ ռեկեզոճ ամբիոն, որը պատշգամբի պէս քաջանում է կենտրոնական սրահի վրայ, եւ որտեղից ընթերցում է Յայմատուրք մատեանից այդ օրուայ սրբի տօնի առթիւ եղած օրինակելի վարքը: Սուրբ Ստեփանոսի մա-

տուում կան երեք սեղաններ, որոնցից մէջտեղինը սուրբ Նախավկայի, աջակողմինը սուրբ Գրիգոր Լուսաւորչի, իսկ ձախակողմինը սուրբ Կիւրեղ Երուսաղէմացու անուններով են:

Մայր տաճարի հարաւային կողմում կայ մահ սուրբ Էջմիածին անունը կրող ընդարձակ սրահը, որ տարածում է ամբողջ հարաւային երկայնքով մէկ, ու մախկիւնում եղել է քաց գաւիթ, եւ 1666թ-ին Եղիազար

Այնթապցի պատրիարքի ժամանակ վերաշինուել է որպէս հակաթոռ սուրբ Էջմիածնի կաթողիկոսութեանը: Այդ սրահի հիւսիսային պատի ներքեւում կան իրար վրայ դրուած երեք մեծ անտաշ ու ողորկ քարեր, որոնք այստեղ են բերուել՝ երկուսը Սինա եւ Թաքոր լեռներից, իսկ երրորդը Յորդանան գետից, որպէսզի դրանով ինչ որ ձեւով կարողանան հեռաւոր սրբավայրերի հանդէպ իրենց կարօտը հագեցնեն Երուսաղէմ հասած յոգնաբեկ ուխտաւորները: Հենց այդ քարերի վրայ էլ յարմարեցուած է սուրբ Սինայի անունը կրող պատարագամատոյց սեղանը:

Ասեմք մահ, որ Հայոց գաղթօջախի նորոգ հանգուցեալների անիւնները համաձայն հինաւորաց քրիստոնէական սովորութեան, յուղարկաւորութիւնից մէկ օր առաջ, վերջին գիշերը թողում են այս սրահում, իսկ յաջորդ օրը հոգեհանգստեան արարողակարգից յետոյ տանում են թաղելու մօտակայ սուրբ Փրկիչ վանքի Հայկական գերեզմանոցում, որտեղ ննջում են մահ քաղր հայոց պատրիարքների անիւնները, ամփոփուած մարմարակերտ ու փառահեղ դամբարանում:

Իսկ տաճարի մայր պատի մէջ քացուած սանդուղէք մեզ տանում է ճիշտ սուրբ Աստուածածնի մատուռի վրայ շինուած, սուրբ Պօղոս առաքելի մատուռը, որը ամբողջովին զարդարուած է գեղեցկազարդ յախճապակիներով: Իսկ աւագ սեղանի ետեւից կարող ենք բարձրանալ սուրբ Պետրոս առաքելի մատուռը, որ ճիշտ նման է միւսին: Եւ Պօղոս-Պետրոսի տօնին այդ երկու մատուռներում միաժամանակեայ պատարագ է մատուցում:

Որպէս լրացուցիչ տեղեկութիւն ասեմք, որ Գլխադրի սիւնին կից, թաղուած են Կիլիկիայի հայոց վերջին թագաւորի՝ Լեւոն Զ-ի կիներ՝ Մարիւմը եւ աղջկը՝ Փեննան, որոնք ըստ աւանդութեան, 1382թ.

Եգիպտոսից Երուսաղէմ են գալիս, եւ ապրելով բարեպաշտութեամբ, իրենց վախճանից յետոյ թաղուում են Սրբոց Յակոբեանց վանքի յիշեալ տեղում: Սուրբ Գլխադրի խորանը մի դուռ էլ ունի, որ բացուում է դէպի արեւմտեան կողմը, որի գաւիթից մօտեք կայ դէպի մայր տաճարի գանձարանը, որ նշանաւոր է իր մեծահարուստ եւ բազմաթիւ զարդերով ու սպասներով:

Այժմ դուրս գանք տաճարի դռնից, որովհետեւ գաւիթում, աւագ դրան աջ ու ձախ կողմերում եւս երկու փոքրիկ խորաններ կան, իրենց սուրբ սեղաններով՝ մէկը սուրբ Գեորգ Զօրավարի, միւսը՝ սուրբ Նիկողայոս Մխմէշեալագործի անուններով, որոնք 1187-1194թ.թ. եօթ տարիներ շարունակ ծառայել են որպէս եկեղեցու սուրբ պատարագի խորաններ:

Որովհետեւ ըստ աւանդութեան տաճարը Սալահեղդին սուլթանի հրամանով փակուել եւ կնքուել էր, այն բանից յետոյ երբ մա բուրից թափուն սուրբ խորանի վրայ մի կանթեղ է վառում: Անցնում է եօթ տարի, Սալահեղդինը վերադառնում է պատերազմից, ու երբ իր խոստման համաձայն բացում են դուռը, մա առաջին հերթին խորան է մտնում, եւ ի զարմանս իրան, տեսնում է կանթեղը ամբողջովին պատուած սարդոստայնով, իսկ մէջտեղում շարունակում էր վառուել կրակը: Տեսնելով այդ հրաշքը, մա հայերին թոյլ է տալիս քացել եկեղեցին եւ շարունակել պաշտել իրենց ամենակարող Տէր Աստծուն:

Մայրավանքի տարածքում է գտնուում սուրբ Թեոդորոս եկեղեցին, որը ըստ աւանդութեան կառուցուել է 13դ. Կիլիկիոյ Հեթում թագաւորի կողմից: Սա այժմ հանդիսանում է նաեւ հնագոյն գրքերի ձեռագրատուն: Իսկ Թարգմանչաց վարժարանին կից գտնուում է ուրիշ ոչ պակաս կարեւոր մի եկեղեցի. սուրբ Հրեշտակապետաց անունով: Այդ անուն է կրում, որովհետեւ ըստ աւանդութեան այնտեղ է գտնուել Աննա քահանայապետի տունը, ուր առաջին անգամ տարուեց Յիսուս Քրիստոս մատնութեան գիշերը, Իր նախնական հարցաքննութեան համար: Այն իր նարտարապետական ռնով համարուում է չորրորդ դարի կառոյց: Եկեղեցու խորանին կից, դրսի կողմից, մինչեւ հիմա գտնուում է նշանաւոր ձիթենին, որի բնից, ըստ աւանդութեան, կապել են մեր Տէր Յիսուս Քրիստոսին: Իսկ Հրեշտակապետաց է կոչուում, որովհետեւ ըստ սուրբ հայրերի գրութեան, մասնաւորապէս Ներսէս Շնորհալու, Յիսուսի հարցաքննութեան ժամանակ, Աննայի յանդուգն ծառաներից մէկը ապտակում է մեր Տիրոջը: Նրկնային Զօրաց պահապան հրեշտակները տեսնելով այդ մարդու ահաւոր յանդգնութիւնը, սարսափից թեւերով ծածկում են իրենց երեսները: Այդ պատճառով եկեղեցու երեք խորաններից երկուսը կոչուում են Միքայէլի եւ Գաբրիէլի, իսկ մէջտեղինը՝ Տիրամօր անունով:

Ահա մի փոքրիկ շրջապտոյտ կատարեցինք Հայոց բազմադարեան եկեղեցու պատմութեան հիմնաւորց արմատներից մէկի՝ Հայոց Նրուսաղէմի Սբբոց Յակոբեանց մայրավանքից ներս: Եւ ինչ որ կարողացանք նկարագրել այս սակաւ էջերում, ընդամենը մի դժգոյն շող էր Հայ Առաքելական ուղղափառ եկեղեցու տիեզերալոյս փառքից:

ՄԵՀՐՈՒԺԱՆ ԲԱԲԱԶԱՆԵԱՆ